ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունվարի 2016թ. թիվ 7-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնքին գույք նվիրաբերելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1421-Ա որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. դեկտեմբերի 3-ի թիվ 1421-Ա որոշման 1-ին կետով նշված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնքի 7-րդ փողոցի N 5 հասցեում գտնվող՝ 3966.3 հազ. դրամ սկզբնական արժեքով ու 178.9 քառ. մետր մակերեսով Լեռնապատի առողջության կենտրոնի նախկին տնակային շինությունը և դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.1000 հեկտար հողամասը (այսուհետ՝ գույք) նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ գյուղական համայնքին՝ որպես մարզասրահ օգտագործելու պայմանով:

2. Կնքել գույքի նվիրաբերության պայմանագիր՝ դրանում սահմանելով, որ՝

1) շինությունը որպես մարզասրահ օգտագործելու համար Լեռնապատի գյուղական համայնքը պարտավոր է սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո նշված շինության վերանորոգման և գույքի ձեռբերման համար կատարել համապատասխան ներդրումներ.

2) Գյուղապետարանը պարտավոր է սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված ներդրումների կատարումը հավաստող համապատասխան փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 15-օրյա ժամկետում:

3. «ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին որպես պետական սեփականություն ամրացված Լեռնապատի առողջության կենտրոնի նախկին տնակային շինությունը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատի գյուղական համայնքին հանձնելու գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնաժողովին՝

20-օրյա ժամկետում իրականացնել սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերում նշված գործընթացը:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. հունվարի 19
ք.Վանաձոր